

ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈՒԹՅԱՆ

«Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական ընկերություն
ՓԲԸ-ի ավագ իրավաբան
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի իրավագիտության բաժնի ասպիրանտ

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԱՄ ԴԵՈՆԹԻԿ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄ

Տեսության և պրակտիկայի իրավական հակասությունները, ի թիվս այլոց, կոչվում են հակասություններ և հակադրություններ: Այս հոդվածում հեղինակը քննարկում է իրավական անհամապատասխանությունները դեոնթիկ տրամաբանության լոյսի ներքո և կիրառելով տրամաբանության սահմանումները և դեոնթիկ օպերատորների կանոնները՝ նա ցույց է տալիս, որ իրավաբանական երևույթն իրականում ոչ թե հակասություն է, այլ՝ հակադրություն: Հետևաբար, հեղինակը կոչ է անում ճշգրտել տերմինաբանությունը և հակասության տրամաբանական թեստի կիրառման փոխարեն կիրառել հակադրության թեստը իրավական անհամապատասխանության առկայությունը հավաստելու համար, ինչպես նաև վերասահմանել անհամապատասխանությունների կարգավորման հայեցակարգը:

Հիմնարար քառեր - հակասություն, հակադրություն, դեոնթիկ տրամաբանություն, անհամապատասխանություն:

Նախաբան

Ինչպես Լարս Լինդախլին է նշում. «Երկու կամ ավել նորմերի իրար հետ «լավ չլինելը» բազմաթիվ եզրույթներով է արտահայտվում»¹: Դրանցից մեկը, որը լայն տարածում ունի նաև Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, «հակասություն» եզրույթն է:

Իրավական անհամապատասխանությունը իրականում հակասություն չէ, և բացի նրանից, որ տերմինաբանությունը կարիք ունի շտկման, երևույթը պետք է բնորոշվի ոչ թե պայմանականորեն և ինչպես պատահի, այլ՝ ելնելով նրա այդպիսին լինելը պայմանավորող հատկանիշներից և պայմաններից:

Որպես այդպիսին, իրավունքում չկան հակասություններ, այլ դրանք հակադրություններ են, հետևապես, իրավական ակտերի միջև «անհամապատասխանության» վերաբերյալ պատկերացումները պետք է հիմնվեն ոչ թե հակասության, այլ հակադրության օրինաչափությունների վրա:

Իրավական անհամապատասխանության վերասահմանումը

«Հակասություն» եզրույթի որևէ սահմանում օրենսդրությունում տրված չէ, ինչը պրակտիկայում հնարավորություն է տալիս նորմերի ցանկացած փոքր-ինչ «խճճված» փոխհարաբերություն անվանել հակասություն, կամ ընդհակառակը՝ իրական հակասությունների դեպքում հայտարարել, որ

դրանք չկան: Իսկ դրանց հետևանքները կարող են լինել ծանր:

Տեսությունում առկա որոշ քիչ թե շատ հաջող սահմանումների ուսումնասիրությունները, այնուամենայնիվ, տալիս են երևույթի մասին պատկերացում: Այդ տեսակետներից թերևս արժե վկայակոչել Լ. Լինդախլի, Ա. Օ. Էլիագի, Ա. Ջուստի, Պ. Ջ. Բրեուկերի և Բ. Դաբլյու. Բրաուերի անհնարինության թեզը, այն է՝ նույն հարաբերությունը կարգավորող ինքնուրույն իրագործելի նորմերը անհնարին լինի միասին իրագործել²: Էական է նաև այն, որ իրավական անհամապատասխանությունը նորմերի հասցեատիրոջ համար առաջացնում է երկրնտրանք, որի դեպքում նորմերից մեկի ընտրությունն անհրաժեշտաբար առաջացնում է մյուսի խախտում³:

Լինդախլի, Էլիագի, Ջուստի, Բրեուկերի և Բրաուերի սահմանումը հիմնվում է ընդհանուր տրամաբանության և դեոնթիկ տրամաբանության վրա: Դեոնթիկ տրամաբանությունը, նեղ իմաստով, սիմվոլիկ տրամաբանության ճյուղ է, որը վերաբերում է պարտավորության, թույլատրության և արգելքի տրամաբանությանը⁴:

Միևնույն ժամանակ՝

• տրամաբանությունում հակասություն է համարվում այն իրավիճակը, որտեղ երկու դրույթներ չեն կարող միաժամանակ լինել ճիշտ, և չեն կարող միաժամանակ լինել սխալ (contradiction)⁵.

Օրինակ՝ կան երկու պնդումներ.

1. ես հավանում եմ պահպանողական մարդկանց,

2. ես չեմ հավանում պահպանողական մարդկանց:

Այս պարագայում երկուսից մեկը կարող է լինել ճիշտ, իսկ մյուսը՝ անհրաժեշտաբար ոչ: Երկուսը միասին չեն կարող լինել թե՛ ճիշտ, թե՛ սխալ. *tertium non datur*:

• Այն իրավիճակները, որտեղ երկու դրույթները չեն կարող միաժամանակ լինել ճիշտ, բայց կարող են միաժամանակ լինել սխալ, կոչվում են հակադրություններ (հակառակ, *contrary*):

Օրինակ՝ կան երկու պնդումներ

1. Երևանում հիմա երեկո է:
2. Երևանում հիմա առավոտ է:

Այս պարագայում երկու պնդումները միասին չեն կարող լինել ճիշտ. այս պահին առավոտ լինելը բացառում է այս պահին երեկո լինելը: Բայց երկուսը միասին կարող են լինել սխալ. այս պահին կարող է լինել օրինակ կեսօր, կամ կեսգիշեր:

• Եվ վերջապես, այն իրավիճակները, որտեղ երկու դրույթները կարող են միաժամանակ լինել ճիշտ, բայց չեն չարող միաժամանակ լինել սխալ՝ կոչվում են ենթաներհակ (*subcontrary*):

Օրինակ՝ կան երկու պնդումներ

1. փողոցն անցնելը թույլատրվում է:
2. Փողոցն անցնելը պարտադիր չէ:

Երկու պնդումները միաժամանակ կարող են լինել ճիշտ, բայց հակառակը՝ ոչ. չի կարող լինել պարտադիր և անթույլատրելի:

Ինչպես նշում է Կելզենը. «Քանի որ իրավական նորմերը, լինելով կարգադրություններ (այն է, հրամաններ, թույլտվություններ, լիազորություններ), չեն կարող լինել ոչ ճիշտ, ոչ սխալ, սպա հարց է առաջանում՝ ի՞նչպես կարող են տրամաբանական սկզբունքները, հատկապես հակասության բացառման սկզբունքը և հետևության կանոնները կիրառվեն իրավանորմերի հարաբերությունների նկատմամբ, եթե, ըստ ավանդական պատկերացումների, դրանք կիրառելի են միայն այնպիսի պնդումների վրա, որոնք կարող են լինել ճիշտ կամ սխալ: Երկու նորմեր չեն կարող միաժամանակ լինել վավեր, եթե այդ երկու նորմերը հակասում են իրար. և մի նորմը կարող է բխել մյուս նորմից, եթե նրանք կազմում են ձևական տրամաբանական սիլլոգիզմ»:

Իրավանորմերի որակի համատեքստում տրամաբանական ճշմարտությունների փոխարեն հանդես է գալիս նորմերի վավերականությունը:

Այլ կերպ ասած՝ տրամաբանության պնդումները փոխարինելով իրավական նորմերով և

առաջինների ճիշտ կամ սխալ լինելու փոխարեն դիտարկելով նորմերի վավեր կամ անվավեր լինելու երևույթը, նորմատիվ տրամաբանության համատեքստում հակասության, հակադրության և ենթաներհակի կանոնները կունենան հետևյալ ձևակերպումները՝

• **Հակասություն. երկու նորմեր չեն կարող միաժամանակ լինել վավեր և չեն կարող միաժամանակ լինել անվավեր. մեկն անհրաժեշտաբար վավեր է, մյուսն՝ անվավեր:**

• **Հակադրություն. երկու նորմեր չեն կարող միաժամանակ լինել վավեր, բայց կարող են միաժամանակ լինել անվավեր:**

• Ենթաներհակ. երկու դրույթներ կարող են միաժամանակ լինել վավեր, սակայն չեն կարող միաժամանակ լինել անվավեր:

Դեոնթիկ տրամաբանության համատեքստում սովորաբար առանձնացվում են հինգ դեոնթիկ նորմատիվ օպերատորներ, որոնք դասակարգված են ըստ տրամաբանության և պատճառականության կանոնների:

Դ-րանք հետևյալն են՝

1. պարտադիր է, որ
2. թույլատրելի է, որ
3. անթույլատրելի է, որ
4. ոչ պարտադիր է, որ
5. կամընտրային է, որ

Դ-ասակարգումը ենթադրում է տրամաբանական շղթա, թե տվյալ երևույթը անհրաժեշտաբար ճիշտ է (անհրաժեշտ է) (*necessary*), անհնար (*impossible*), ոչ անհրաժեշտ (*non-necessary*), հնարավոր (*possible*), թե պատահական (*contingent*):

Նշվածը դիտարկենք իրավունքի ոլորտի օրինակների վրա:

Դիցուկ՝ օրենքը սահմանում է, որ գործարքների որոշ տեսակներ ենթակա են պարտադիր նոտարական վավերացման: Հակառակ դեպքում գործարքը, օրինակ, կլինի առոչինչ¹⁰: Համապատասխան տրամաբանական օպերատորը «պարտադիր է, որ» օպերատորն է: Քանի որ օրենքը սահմանում է պարտավորություն՝ վավերացնել տվյալ տեսակի գործարքը, սպա այն նաև թույլ է տալիս իրականացնել գործարքի վավերացում. սա «թույլատրելի է, որ» իրավիճակի օրինակն է: Հակառակ դեպքում տվյալ տեսակի գործարք կնքել ցանկացող անձինք չեն կարողանա կնքել վավեր գործարքներ:

Այժմ ենթադրենք, որ օրենքը արգելում է նոտարական գործողությունների իրականացում (օրինակ՝ «Նոտարիատի մասին») Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը նոտարի կողմից նոտարական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գործողության կատարման մերժում է նախատեսում, եթե ներկայացված փաստաթուղթը կամ պահանջվող նոտարական գործողությունը ենթակա չէ նոտարական վավերացման կամ հաստատման¹¹ . սա «անթույլատրելի է, որ» օպերատորի դեպքն է: Քանի որ այդպիսի գործողությունն արգելված է, այն նաև պարտադիր չէ («ոչ պարտադիր է, որ» օպերատոր): Հակառակ դեպքում նոտարական վավերացում պահանջող գործողություն անելու համար անձինք չեն կարող հասնել արդյունքի, որովհետև նոտարական գործողության կատարումը կմերժվի:

Եվ, վերջապես, այն իրավիճակում, երբ օրենքը չի պարտադրում կատարել որոշակի գործողություն, բայց և չի արգելում դրա կատարումը, ապա գործ ունենք «կամընտրային է, որ» իրավիճակի հետ. օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված է. «...յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն»¹² :

Վերևում նկարագրված իրավիճակները անհամապատասխանությունների տեսանկյունից փոխհարաբերվում են հետևյալ կերպ.

- թույլատրելին և անթույլատրելին, պարտադիրը և ոչ պարտադիրը համապատասխանաբար տրամաբանական հակասություններ են,

- **պարտադիրը և կամընտրայինը, անթույլատրելին և կամընտրայինը, պարտադիրը և անթույլատրելին համապատասխանաբար տրամաբանական հակադրություններ են,**

և վերջապես՝

- թույլատրելին և ոչ պարտադիրը ենթաներհակ են¹³ :

Դեռնքիկ տրամաբանության կանոնները կիրառելով իրավունքի և իրավական նորմերի վրա, պարզվում է, որ իրավունքում, դժվար թե հնարավոր լինի գտնել այնպիսի վարքագծի կանոններ, որոնք բացառապես **թույլատրեն**, կամ՝ լինեն **ոչ պարտադիր**:

Իրավունքում, հավանաբար, չկան մաքուր «թույլատրելի է, որ» և «ոչ պարտադիր է, որ» կոնստրուկցիաներ, որովհետև չկան նորմեր, որոնք միայն թույլատրեն որոշակի վարքագիծ՝ առանց այդ վարքագիծը կամ պարտադիր, կամ ոչ պարտադիր լինելու, կամ չկան նորմեր, որոնք միայն ոչ պարտադիր վարքագիծ նախատեսող նորմեր լինեն, միևնույն ժամանակ չլինելով կամ թույլատրելի, կամ արգելված:

Վարքագծի կանոնների բովանդակությունը համապատասխանում է կամ «պարտադիր է, որ», կամ «կամընտրային է, որ», կամ էլ «անթույլատրելի է, որ» դեռնքիկ իրավիճակներին: Այս երեք օպերատորներին նույնանում են համապատասխանաբար պարտադրեցնող, իրավագործող և արգելող իրավականորմերի տեսակները:

Հետևաբար, կարելի է փաստել, որ այս երեք վարքագծերի տրամաբանական հարաբերությունը ոչ թե հակասությունն է, այլ հակադրությունը:

Եզրակացություններ

Իրավանորմերի վավերականության քննությունը ենթադրում է անհամապատասխանության լուծմանն ուղղված խնդրի քննարկում, որի համատեքստում անհամապատասխանությունների կարգավորման կանոնները նույնպես ենթարկվում են տրամաբանության օրինաչափություններին:

Լուծել հակասություն, նշանակում է՝ գտնել իրար հակասող դրույթներից այն մեկը, որը ճիշտ չէ, կամ վավեր չէ: Հակասությունը ենթադրում է ընտրություն:

Լուծել հակադրություն, նշանակում է՝ կամ գտնել հակադրելի դրույթներից այն մեկը, որն անվավեր է, կամ հանգել երկու հակադրելի դրույթների միաժամանակյա անվավերությանը:

Սա նշանակում է, որ նորմերի վավերականության որոշման հարցը ենթակա է դիտարկման ոչ թե չհակասելու կանոնի ներքո (*law of non contradiction*), որի պարագայում երկու նորմերից միայն մեկը կարող է լինել վավեր, այլ այսպես ասած «հակադրության բացառման» կանոնի լույսի ներքո, որի համատեքստում, եթե երկու նորմեր չեն կարող միաժամանակ լինել վավեր, ապա հնարավոր է, որ.

1. նրանցից մեկը լինի անվավեր,

2. նրանք բոլորը լինեն անվավեր:

Այսպիսով, անհամապատասխանությունների հետ աշխատանքը ենթադրում է երկու խնդիր.

1. Արդյո՞ք առկա է անհամապատասխանություն. այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել, թե որ հատկանիշների առկայությամբ պետք է հարցին տալ դրական պատասխան, իսկ որոնց դեպքում՝ բացասական:

2. Ինչպե՞ս լուծել իրավական անհամապատասխանությունը այն հայտնաբերելիս:

Իրավական անհամապատասխանության հայտնաբերման առաջին խնդրի համատեքստում, հակասությունների դեպքում՝ (1) սուբյեկտը չի կարող իրացնել երկու նորմերը միասնաբար, (2) բայց և չի կարող չիրացնել նորմերից որևէ մեկը. իրավական անհամապատասխանության հայտնաբերման խնդրի համատեքստում դա վերաբերելի չէ (*irrelevant*), որովհետև անկախ երկրորդ պայմանի կիրառումից, առաջին պայմանը սուբյեկտին դնում

է բավարար երկրնորանքի առջև, և նրա համար խարխլում է իրավական որոշակիության և լեգիտիմակնկալիքների պատկերը: Հակադրությունների դեպքում (1) սուբյեկտը չի կարող իրացնել երկու նորմերը միասնաբար, (2) բայց թե որը պետք է իրացնի, էական չէ. թե նորմերից որը պետք է իրացնի հայտնաբերված անհամապատասխանության լուծման խնդիր է և կախված է անհամապատասխանությունը կարգավորող նորմից: Հետևապես, վերոգրյալը ցույց է տալիս, որ իրավական անհամապատասխանության վերասահմանումը՝ որպես իրավական հակադրություն հնարավորություն է տալիս բացահայտել, թե որ դեպքում է իրավիճակը հանդիսանում իրավական անհամապատասխանություն: Պրակտիկայում, սա նշանակում է, որ, օրինակ՝ դատարանները պետք է իրավական անհամապատասխանությունների գոյության շուրջ վեճերը լուծեն հակադրության թեստի միջոցով:

Իրավական անհամապատասխանության լուծման համատեքստում, անհամապատասխանության մեջ գտնվող նորմերի վավերականության հարցի կարգավորումը թույլ է տալիս վերահիմնատավորել անհամապատասխանության իրավիճակների լուծումները և նորմերի վավերականության չեղարկման կանոնները: Անհամապատասխանությունները կարգավորելիս հնարավոր է չեղարկել ինչպես անհամապատասխանության մեջ գտնվող առանձին նորմեր, այնպես էլ դրանք՝ միասնաբար: Սակայն, վերջինս պետք է կատարվի իրավունքի այլ սկզբունքների և նորմերի լույսի ներքո՝ բացասական երևույթները բացառելու համար: Նշվածը պահանջում է անհամապատասխանությունների իրավական կարգավորման կանոնների վերանայում:

¹ Lars Lindahl, Conflicts in Systems of Legal Norms: A Logical Point of View, Coherence and Conflict in Law. Deventer 1992 Kluwer, էջ 40:

² Տե՛ս օրինակ՝ A.O. Elhag, A.P.J. Breuker, B.W. Brouwer, On the Formal Analysis of Normative Conflicts, Information & Communication Technology Law, Vol. 9, No. 3, 2000, online: <http://www.jurix.nl/pdf/j99-04.pdf>

³ Տե՛ս նույնում, էջ 41:

⁴ Տե՛ս օրինակ՝ Paul McNamara, Challenges in Defining Deontic Logic, Stanford Encyclopedia of Philosophy, online: <http://plato.stanford.edu/entries/logic-deontic/challenges.html>, կամ Տե՛ս J. Hansen, G. Pigozzi and L. van der Torre, Ten Philosophical Problems in Deontic Logic, online: <http://icr.uni.lu/leonvandertorre/papers/normas07b.pdf>, էջ 1:

⁵ Տե՛ս օրինակ՝ The free dictionary by Farlex, online: «<http://www.thefreedictionary.com/contradictory>».

⁶ Նույնում online: «<http://www.thefreedictionary.com/contrary>». տե՛ս նաև Paul McNamara, Contradiction, Stanford Encyclopedia of Philosophy, online: <http://plato.stanford.edu/entries/contradiction/>

⁷ Տե՛ս նույնում online: «<http://www.thefreedictionary.com/subcontrary>», թարգմանության համար տե՛ս Նայիրի Հայերենի ուղղագրիչ առցանց բառարանի անգլերեն հայերեն բառարանում. Online: «http://www.nayiri.com/search?l=hy_LB&dt=EN_HY&r=0&query=subcontrary» աղբյուրը՝ Մեսրոպ Կ. Գույումճեան, Ընդարձակ Բառարան Անգլիերենի Հայերեն. Պէյրուք: Կ. Տոնիկեան եւ Եղբայրք (1981): էջ 1229

⁸ Տե՛ս H. Kelsen, Pure Theory of Law, The Lawbook Exchange Ltd 2005 Clark, New Jersey, էջ 74:

⁹ Տե՛ս օրինակ՝ Paul McNamara, Deontic Logic, Stanford Encyclopedia of Philosophy, online: «<http://plato.stanford.edu/entries/logic-deontic/>»

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 Քաղաքացիական օրենսգրքում, ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ԱԺ, 12.11.2012, ՀՕ-216-Ն դրությամբ, հոդված 300-րդ:

¹¹ Տե՛ս Նոտարիատի մասին Հայաստանի Հանրապետության 2001թ. դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքում, ՀՀՊՏ 2002.01.10/2(177) Հոդ.2-րդ, ԱԺ, 25.05.2011, ՀՕ-176-Ն դրությամբ:

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:

¹³ Տե՛ս հիշատակված «Paul McNamara, Deontic Logic» աշխատանքում:

Геворг Акопян

Старший юрист адвокатской фирмы ЗАО “Концерн-Диалог”,
аспирант департамента права института философии,
социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

От противоречий к противоположностям или деонтическо-логическая поправка

В теории и в практике правовые несоответствия именуются по разному. Между прочим, они называются противоречиями и противоположностями. В настоящей статье автор рассматривает правовые несоответствия в свете деонтической логики, и применяя определения логики и деонтических операторов он показывает, что по сути, рассматриваемый юридический феномен является не противоречием, а противоположностью. Поэтому автор призывает к упорядочению терминологии и применению теста логической противоположности вместо теста противоречия в ситуациях, где требуется выявление несоответствий в праве, а также определяет концепцию урегулирования несоответствий.

Ключевые слова: противоречие, противоположность, деонтическая логика, несоответствие.

Gevorg Hakobyan

Senior Lawyer Concern-Dialog Law Firm CJSC
Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA,
Law department, aspirant

SUMMARY

From Legal Contradictions to Legal Contraries, or Deontic Logical Adjustment

In theory and practice legal inconsistencies are called differently. *Inter alia*, they are called contradictions and contraries. In this article the author discusses the legal inconsistencies in the light of deontic logic, and by application of the definitions of logic and the rules of deontic operators he shows that in fact the judicial phenomenon is not a contradiction, but rather a contrary. Subsequently, the author calls for adjustment of terminology and application of the test of logical contrariety instead of the test of the contradiction in the situations, where one needs to find whether there is an inconsistency in law, or not, as well as redefines the concept of inconsistency regulation.

Keywords: contradiction, contrary, deontic logic, inconsistency.